





պղտորելու մանայած ընդհանրապես  
րիարքարանի և վարչութեան  
մտքերը :

Տեսա իրախանալի և յուս-  
տաղի մտքերն որ տեղույս  
երկրապետութեան մեծամաս-  
նութիւնը ըմբռնելով ժամա-  
նակի պահանջումները, ձեռք  
երկնցուց և զտրալիզ եղաւ քանի  
մը ազնիւ ուժերու, որոնք 2—3  
տարիէ ի վեր կերպարանափոխե-  
լու կաշխատէին, և ամէն զոհո-  
ղութիւն ընելու պատրաստ փտած  
հայ հասարակութիւնը ու անոր  
ստորուկ երիտասարդութիւնը ար-  
թընցնելու և թօթափելով վրա-  
նին ամրացած բոլոր նախապա-  
շարուսները, տոգորելու զանոնք  
ժամանակին պահանջումներու հա-  
մաձայն վեհ գաղափարներով :  
Այս 2—3 տարիները ֆիլիպէի  
համար կուրի տարիներ եղան .  
սակայն պէտք չէ ուրանալ որ այդ  
անընդհատ գաղափարի կուրնե-  
րով էր որ վերակենդանալու  
նշանները ցոյց տուաւ երիտա-  
սարգութիւնը, ինքնաճանաչու-  
թիւնը իր մէջ զարգացնելու  
նկրտելով . արդիւնքը այժմ սկի-  
ններու է : Հաւաքաբար այս սարի  
առաջին անգամը ըլլալով թաղա-  
կանի ընտրութիւն մը ըրին, զա-  
ղափարուած ազնիւ, և միանգա-  
մայն ազդեցիկ անձնաւորութիւն-  
ներէ, որոնց առաջին գործ-  
քը պիտի ըլլար հոգաբարձուի  
ընտրութիւնը՝ յանձնելով վեր-  
ջինին երկսեռ վարժարաններու  
բարեկարգութիւնը, և որ ի հարկէ  
ամէն ջանք չպիտի խնայէր ա-  
պագայ մատաղ սերունդի դաս-  
տիարակութեան ամէնակարեւոր  
գործը յանձնելու՝ կարող, և ժա-  
մանակիս պահանջումներու ոգին  
ըմբռնող մանկավարժներու և  
դաստիարակներու ձեռքը, հա-  
մուղուած ըլլալով որ այսպիսի

յարկի մը տակ միայն մատաղ  
սերունդը տաշուելով, կոկուրելով  
ապագային հայութեան վար-  
չադրոյն յոյսերը պիտի ըլլան :  
Կուսակցական կիրքերը հան-  
գարտած են . պատճառը բա-  
ցայայտ է — պառակտիչ Ար-  
սէնի անդէս բացակայ գոտուիւն  
է :

Պուկարիոյ հոգեւոր հովի-  
Քիւր. Ք. վրդ. Պաղճեան անել  
դրութեան մէջ կը գտնուի . յիշ-  
եալը տեղիս ազգային գործերը  
կարգադրած ըլլալուն, պաշտօ-  
նին բերմամբ մտադիր է այցա-  
լել ուրիշ քաղաքներ, սա-  
կայն շուտաւ մնացած է . գրե-  
թէ ամէն տեղ « յիշուի չը յիշուի »  
խնդիր կայ և ամէն տեղ ալ մե-  
ծամասնութիւնը չը յիշուի կողմն  
է, ինք պատրիարքի ներկայա-  
ցուցիչը ըլլալուն բնականաբար  
պատրիարքի հակառակ քայլ մը  
չի կրնար առնել, հակառակ պա-  
րագային իր հեղինակութիւնը  
կը կորսնցունէ և . . . իսկ մոլո-  
վուդին Օրմանեանի դէմ զգա-  
ցած արգար զայրոյթին ու ա-  
տելութեան ալ ու է խօսք չի  
գանար ըսելու :

Գրասիրաց Եղբայրութեան  
նորընտիր վարչութիւնն՝ զգալով  
նախկին վարչութեան ապիկարու-  
թիւնը և երբէք օգտակար չըլ-  
լալը անցեալին մէջ — թէեւ նախ-  
կինները ժամանակի գէշութեան  
վերագրեց կուրն, կը խոստանա-  
օգտակար ըլլալ երկսեռ ընթեր-  
ցասէր հասարակութեան, և գործ-  
նականապէս սկսած են ապացու-  
ցանել . ապսպրելով կարեւոր  
թերթեր և հանդէսներ, ժամա-  
նակի պահանջումներու համաձայն  
վէպեր, պատկերներ իրական

կեանքերէ առնուած, և հանրա-  
մատչելի գիտական գրքոյկներ .  
որոնք ընթերցողին միտքը կը  
մշակեն նոր գաղափարներով, և  
հոգին կազնուացնեն :

Կը մաղթենք աւելի եռանդուն  
գործունէութիւն նորընտիր վար-  
չութիւնը օգտակար գործ մըն ալ  
ըրած պիտի ըլլայ թուրքերէն  
բարբառով գրուած հին, ծթած  
գրքերը այլեւս չտալով հասարա-  
կութեան կարգալու, թէեւ ա-  
նոնք ուզեն, որովհետեւ անոնք  
օգուտ մը չունենալէ զատ քնաս-  
ներ ունին :

Վ. Մ.

Նիւ-Եորք, 7 Յունիս

Վերջին շաբաթներս տրկա-  
ծայից և մահաբեր օրեր եղան  
Ամերիկայի հայ գաղութին հա-  
մար : Ուէսթ Հոպօքընի մէջ աչ-  
նիւ հայ երիտասարդ մը, դեռ  
18 տարեկան ծաղիկ հասակի  
մէջ, իր հեծեալներով մէկտեղ  
ելեքտրական կառքի մը տակ  
Չախլախուեցաւ : Յուլիս 4ին  
Նիւ-Եորքի հայկազեան կաճառի  
ստաճ գաշտային հանդէսին  
մէջ, զբօսախաղերու միջոցին,  
երիտասարդի մը 12 փառնտնոց  
երկաթէ գնդակը շեղեցաւ իր  
ուղիղ ընթացքէն ու գնաց զար-  
կաւ ու ճեղքեց Պ. Ա. Չախուր-  
եանի գլուխը . աղան զետին  
տապալեցաւ անշունչ, կէս տաս-  
նեակ հայ բժիշկներ, որոնք  
հանդէսին ներկայ էին, ամէն  
գարման փութացուցին ու աղան  
ուշքի բերին որուն վէրքը վեր-  
ջերս առուչանալ սկսած է : Ես-  
թաթ մը հաչու կայ որ, կրկին  
Ուէսթ Հոպօքընի մէջ բաւական  
տարիքոտ Տիգրանակետցի հայ  
մը, Պօղոս Գարանֆիլեան, քե-  
ղատարափ անձրեւէն պատսպա-  
րուելու համար կը մտնէ իր ըն-

կերներով անշարժ կեցած վա-  
կունի մը տակու երկու րօպէ շան-  
ցած կուգայ շոգեշարժ մեքենան  
քաշել տանելու անշարժ վաղոնը՝  
որը ետ մղուելով կը ճիղմէ հայու  
գլուխը և ուրիշ ասորի մը ոտքը  
կը կոտրէ, միայն իրենց մէկը  
մաղապուր կազափ մահէն : Ուս-  
թըրի մէջ դարձեալ երկու հա-  
յեր ելեքտրական կառքին կը  
զարնուին և ծանրապէս վիրա-  
ւորուած հիւանդանոց կը փո-  
խադրուին :

Բայց այս ուրբաթ օրը ալ մա-  
հուան և արկածին արհաւիրքը  
իր գագաթնակէտին հասաւ, երբ  
յանկարճ գոժուեցաւ Փրօփի-  
տէնսի հայ հովիւ Տ. Վաղինակ Մ.  
վարդապետի մահուան բօթը :

Առոյգ, կրակ ու բոց վարդա-  
պետի մահը զարհուրելի անակըն-  
կալ մըն է Միացեալ Նահանգնե-  
րու հայ գաղթականութեան հա-  
մար, մասնաւորաբար Փրօփի-  
տէնսի հայ գաղութը խոր սուգի  
մէջ թաթխուած է իր սիրելի,  
գործունեայ առաջնորդի մահ-  
ուան համար :

Տ. Վաղինակ հաչու 7—8 օր  
նախ թեթեւ հիւանդութիւն մը  
կուրնայ . վերջին օրը միայն կը  
ծանրանայ վիճակը, «ախ սի՛րտս,  
սի՛րտս» կաղաչակէ քանի մը ժամ  
և հոգին կաւանդէ :

Սարաճեան Եպիսկոպոս, Տէր  
Մաշթոց և Խաթ վարդապետները  
և Տ. Գասպար քահանայն Փրօփի-  
տէնսի ազգային ժողովարանին  
մէջ կատարեցին հանգուցեալ  
վարդապետի օժման արարողու-  
թիւնը : Եպիսկոպոսը ուզած է  
մարմինը Ուսթըրի Ս. Փրկիչ Կ-  
կեղեցիի մէջ թաղել, սակայն  
տեղային կառավարութեան օրէն-  
քը չը թոյլագրելուն համար ե-  
կեղեցիի մէջ օր և է մէկու մը  
թաղուիլը, ամերիկեան գերեզ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՐՈՍԸ

«Բարուչկա» Ծոգենաւը ճամբա  
էր ընկնում Բաթումից դէպի Փօթի  
կէս օրին :

Ապրիլի գեղեցիկ և պայծառ օր  
էր . ամպի կտոր անգամ չէր նշմար-  
վում ջինջ երկնակամարում . և  
մենք, սակաւաթիւ ճամբորդներս,  
չատ գոհ էինք : Եթէ եղանակը մի  
քիչ վատ լինէր, բոլորիս արամաղ-  
ութիւն էլ պէտք է փչանար, որով-  
հետեւ «Բարուչկան» որ ուսուրէն  
նշանակում է մեծ մայր, իսկապէս  
արժանի էր իր այդ անուան : Պա-  
ռուսական ամենահին նաւերից լինե-  
լով արդէն աչքից ընկած, վաղուց  
զազարել էր երկար ճամբորդութիւն  
անկուց . նաւային ընկերութիւնը  
որոշել էր որ ձերացած Բարուչկան  
միայն Բաթումից Փօթի և Փօթից  
Բաթում գնայ-գայ : Ծամբորդները  
այդ կարճ ճանապարհն էլ այնքան  
վստահութեամբ չէին կատարում Բա-  
թուչկաի վրա, մանաւանդ որ ձեր

էր և նրան վարող նաւապետը թէեւ  
հին ծովագնաց, բաւական փորձված  
սեւ ծովի վրա, քայց էլ մեծ նաւ  
չէին վստահանում նրան : Այնպէս  
որ կարծես Բարուչկան մնացել էր  
այդ նաւապետի համար, նաւապետն  
էլ ապրում էր միայն Բարուչկաի  
վարիւղը համար :

Մենք էլ, աւելի խաղաղ ու գեղե-  
ցիկ եղանակին վստահանալով մեզ  
յանձնեցինք այդ երկու ձերերին,  
որոնցից մէկը անշունչ էր : Մեր  
մտքից դեռ չէր վերացել մեր պայե-  
րից լսածը . թէ՛ ձերերը փորձված  
և չըջանալաց ու խոհեմ են . նրանք  
միշտ կարող են վտանգներից խու-  
սափել . . .

Բարուչկան տեղիցը շարժվեց .  
իր կիսու չափ մեծութեամբ ժան-  
գտած խարխուլը հաղիւ հազ հանե-  
ցին ծովի յատակից : Նաւը սկսեց  
իր խոյլ ու հինցած անիւներով ճեղ-  
քել ծովի խաղաղ մակերեսով  
եռեւից ջրային մի թոյլ հոսանք  
թողնելով :

Կամաց կամաց առաջ էինք անց-  
նում, բոլորովին վստահ որ մի քա-  
նի ժամից պէտք է հասնենք տեղ :

Աչքներս ծովին ուղղած դիտում  
էինք նաւի ետեւից եկող ձկներին  
կամ թէ լողազող անձեւ ու անկեր-  
պարանք ինֆուզօրեաներին :

Այդպէսով բոլորովին աննկատելի  
անցանք մի քանի ժամվայ ճանա-  
պարհ . յանկարճ որ տեղից որ էր  
երեւան եկաւ մշուշ . ծովագնաց-  
ներին ամենավտանգաւոր թշնամի-  
ներից մէկը, որից մարդիկ վախե-  
նում են նաւերը արագ շարժելու,  
մոլորվում շատ անգամ, թէեւ  
կօծպատն էլ զոյութիւն ունի : Բա-  
թուչկաի վրա իրարանցում ընկաւ .  
ձեր նաւապետի դէմքում անհան-  
գրատութեան նշաններ երեւացին :  
Նա հրամայեց բոլորովին դանդա-  
ղացնել գնացքը : Նաւապետի երի-  
տասարդ օգնականը ընդհակառակը  
խորհուրդ տւեց կարելի եղածի  
չափ գնացքը արագացնել, շուտով  
փոքրիկ տարածութիւնը կտրել անց-  
նելու, մինչև որ վախուրդ կերեւար :

Բայց ձեր և փորձված նաւապետը  
պնդեց իր սասածի վրա .  
— Անկարելի է, անխոհեմութիւն  
է գնացքը արագացնել . իմ մազերս  
ծովի վրա են ճերմկել . մշուշը կա-  
րող է աւելի խտանալ և մի քայլ  
անգամ անկարելի կը լինի անելը :

Եթէ, շարժվենք անպատճառ ժայռե-  
րի ու խութերի կը զարնվենք :  
Լաւ է դանդաղեցնել, նոյնիսկ  
կանգնեցնել, խարխուլը զցել . այս-  
քան մարդկանց կեանքը մեզ է  
յանձնված : Մենք պատասխանատու  
ենք թէ Աստուծու և թէ մարդկանց  
առջեւ . . .

Խոհեմ, տարեց եւ շրջանայեաց  
ճամբորդները համաձայնեցին ձեր  
նաւապետի հետ, և երիտասարդ  
օգնականի յանդուգն ստաջարկը  
ջուրն ընկաւ : Նաւապետը ղեկա-  
վարին եւ օգնականին մի քանի  
պատէրներ տւեց և ինքը մտաւ  
սենեակը քնանալու, կամ աւելի  
ճիշդ՝ բոլորովին անշարժանալու :

Ծերուկ նաւապետի հրամանը կա-  
տարվում էր ճշգուրտաբար . Բարուչ-  
կան հաղիւ էր օրորվում . նրա ա-  
նիւները կաթածանար ձերուսու  
ոտքերի նման հաղիւ շարժվում էին  
և ջուրը ճեղքում : Սեւ մշուշի մէջ  
այդ հին ու սեցած նաւային կմախ-  
քը զարհուրեցնող սպաւորութիւն  
էր թողնում . նա կարծես մեզ շալա-  
կած ուզում էր ընկղմվել ծովային  
անդունդի մէջ . կամաց կամաց,  
կեանքից բաժանվելու ծանրութիւնը  
աւելի զգալի դարձնելով :

մանատան մէջ մասնաւոր տեղ մը գնեցին և հոն թաղեցին այս ամենահեռաւոր և օտար աշխարհին մէջ վախճանեալ առաջին հայ կղերականի մարմինը :

Տ. Վաղինակ վրդ. Սիօակեան ծնած էր Պրուսայի Մեծ-Նոր Գիւղը, Երուսաղէմի միաբաններէն էր, 15 տարի առաջ վարդապետ ձեռնադրուած էր Տէր Ղեւոնդ եպօ. Շիրմանեանէ, քանի մը կարեւոր գաւառներու առաջնորդ եղած էր : Կ. Պօլսոյ Սամաթիոյ Նոր Թաղին քարոզիչ եղած ժամանակ յեղափոխականներու ամէն կերպով աջակցեցաւ (\*), մտերիմ բարեկամն էր շատ մը նշանաւոր հայ յեղափոխական գործիչներու, Կ. Պօլսոյ ցոյցերէն վերջ նտիպուեցաւ արտասահման անցնել, Պուլկարիա քիչ մը մնալէն վերջ Փրօվիտէնսի հայերը զինքը իրենց հովիւ ընտրեցին : այս պաշտօնը վարեց գրեթէ երեք տարի շատ օգտաւէտ կերպով : Մայր երկրի որքերուն Ձէյթիոնի և Վանի ինպատու բաւական կոկիկ հանգանակութիւններ ըրաւ : Իր հօտին ընդհանրապէս օգտակար եղաւ ու հօտն ալ սիրեց զինքը :

Իր մարդկային թերութիւններով մէկտեղ Սարաճեան Սրբազանէն շատ բարձր էր և շատ սրտակից ու գաղափարակից բարեկամը հայ երիտասարդութեան և յեղափոխութեան :

Հայ կղերականութեան աղգա-

(\*) Նոյնիսկ Մամբրէի մասնութեամբ Հիւանդանոցի մէջ արգիլուեցաւ, և կտաւարութիւնը զինքը Դամասկոս պիտի աքսորէր, բայց Աշըքեան իր հայրենակից կը սիրէր. պաշտպանեց և ազատեց :

Ծ. Խ.

գաւ, փտած ու շահամոլ գասակարգին մէջ շատ քիչեր կան հանգուցեալ հայր սուրբին նման. իր ամենէն գովելի յատկութիւնն էր դրամ չը պաշտելը. իր ամբողջ պաշտօնավարութեան մէջ օր մը իր ժողովուրդը չը կողոպտեց իր քսակը լեցնելու համար :

Կը տեսնէ՞ք, Սարաճեան Սրբազան, ազգի իրական ցաւերով այրող յառաջդիմական, յեղափոխական երիտասարդութեան գաղափարակից վարդապետի վրա որքա՞ն արցունք կը թափենք. իսկ վաղը, ձեր մահէն վերջ, տիրացուներու և տղէտ աղաներու ձեռք աշտման բարեկամ դասակարգն միայն քիչ մը պիտի ցաւի, ու դուք յաւէտ պիտի մոռցուիք անոնցմէ ու ձեր յիշատակը պիտի ատուի ազգի եռանդուն ու անկեղծ երիտասարդութեան կողմէ :

Ձանացէք երիտասարդութեան սիրելի ըլլալ :

Թ. Չ.

ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպէս ծանուցուած էր Շարժումի նախորդ թուով, Վառնայի եկեղեցւոյ նորակազմ դպրաց գասը, կիրակի, Վարդավաթի առաւել իր անդրանիկ եռաձայն պատարագի երգեցողութիւնը կատարեց :

Թէ օրուան տօնին, և և թէ դաշնակաւոր երգեցողութիւն մտիկ ընելու համար, եկեղեցին լցուած էր հաւատացեալներու խուռն բազմութեամբ. նորնծայ դպիրներն իրենց նոր շարիկներով պատարագը երգեցին եռաձայն սկիզբէն մինչև վերջը յաջողութեամբ. որքան կարելի է սպասել առաջին անգամուան համար : (\*)

(\*) Այս մասին մասնագիտական քննադատութիւն մը պիտի հրատարակենք յաջորդով : Ծ. Խ.

Եկեղեցին, մայր երկրէն դուրս, օտար միջավայրի մէջ, այն սակաւաթիւ անդերէն մէկն է. որ մեր բնագաւառը կը պատկերացնէ մեզ. և իր մէջ կը ցոլացնէ մեր անցեալի ու ներկայի ամբողջ փառքն ու նսեմութիւնը, մեծութիւնն ու անկուճար մը. ժպիտն ու արցունքը. վայելքն ու շարժարանքը :

Ծանօթ են մեզի անոր կամարներն ու խորանները. անուշ է անոր խուռնը, ու ընտանի երգն ու մեղեդին. ու անոնց ամէն մէկ կէտերն, քուլաներն, շեշան ու իրան հազարներով յիշատակներ կարթնցնեն մեր մէջ :

Դուրսի օտար ու ուժգին հովերու գիմաց մեր քնացած ու բթացած ազգայնական զգացումներն հոն կարթննան, կը սուրնան, ու կամբարապնդուին մեզ հայրենիքին ու ազգայնութեան կապող թելին. ու եթէ գիտնանք մեր մանկութիւնն ու երիտասարդութիւնը միշտ ամուր պահել այդ սրբավայրին հետ, առանց կրօնամոլների պատրաստելու, շատ զիւրաւ չի պիտի հեռանան ու տարբարւածուին անոնք :

Վառնայի եկեղեցւոյ երաժշտապետ Պ. Յակոբ Վարդապետեան գնահատելի ծառայութիւն մը մատուցելով նորազանակութիւնը եկեղեցւոյն մէջ. հրապարակաւ կը շնորհաւորենք զինքն իր տարած աշխատութեան և ձեռք բերած յաջողութեանը համար : Գովելի են նաև ինքնաբերաբար երգեցողութեան մասնակցող դպիր երիտասարդներու աշխատութիւնը :

Շնորհաւորելի են նաև քահանաներն ու հոգաբարձուներն, որոնք դժուարութիւն չի յարուցին այս նորութեան դէմ. ինչ որ կը պատահի շատ անգամ :

Եկեղեցւոյ աւարտումէն ետքը դպրաց գասը սեղան մը տուաւ քահանաներուն և հոգաբարձուներուն և անով տօնեց իր հիմնականութիւնը :

Երանի թէ մեր յաջորդները անոր հարիւրամեակը տօնելու բախտը ունենային, և Պուլկարիոյ ուրիշ հայաբնակ քաղաքներն ալ հետեւէին Վառնայի օրինակին :

ԵՐՈՒՍՉ

—(—)

ԱԶԱՐԵԱՆԻ ՅԱԶՈՐԴԸ

Հուովմէական հայոց Պատրիարքական ընտրութիւնը վերջացեր է և ընտրուեր է Պօղոս եպօ. Էմմանուէլեան իր բն. յաջորդ Ազարեանի :

Մեզ կը տեղեկացնեն թէ՛ նոր ընտիր Պատրիարքը յետին ծայր մոլորաւոր մէկն է և «Արտաքոյ հոռոմայ եկեղեցւոյ չի քփրկութիւն» ըսողներուն էն գըլխաւորը. 70 տարեկան է և գլուխը ու ձեռքերը կը դողդղան եւ զեր :

Այս ընտրութիւնը ազտօտ և խուլ պայքարի մը արդիւնքն եղած է. ընտրեալը անգամ չուարեր է և մտքէն չա ցնելէն զատ չերազէր եղեր անգամ Պօլսոյ Պատրիարք ըլլալ :

Ժողովուրդին և երեւելիներուն ընտրելին եղած է Ատանաի առաջնորդ Պօղոս եպօ, Թէրզեան ուսեալ և ազգասէր և կրթուած անձ մը. սակայն որովհետեւ ժամանակին կարգ մը բարեկարգութիւններ մատնանիչ ըրեր է Հայ-Հուովմէական եկեղեցականութեան մէջ, այս պատճառաւ ամբողջ կղերականաց դասակարգը ոտքի ելաւ և անոր ընտրութեան ընդգիմանալով յաջողեցաւ գործը շուրջ ձգել :

Արդէն կրսեն թէ Հայ-Հուովմէական եկեղեցականութիւնը և Պատրիարքարանը շատ զեղծ վիճակի մէջ ըլլալուն՝ բարեկարգութեան կարօտութիւնը զգալի եղած է և ասոր համար վախերնուն չեն ուղած որ զօրաւոր մէկը Պատրիարք ընտրուի, ուստի շանացած են սինօզականները համոզել և յաջողած են անանկ մէկը ընտրել որ գործերը իրենց նախկին վիճակը շարունակեն :

Ազարեան ազգին երկու մասե-

Երիտասարդ օգնականը իր տեղումը կանգնած ճիգ էր թափում իր դիտակով թափանցել շարագուշակ մը շուշի մէջ. բայց զուր. մշուշը անթափանցելի էր. փարոսը, լուսատու և լուսատու կէտը չէր երեւում : Օգնականը բարկացած ինքնիրեն խօսում էր.

— Խնթ ծեր. ականջ չը դրեց. եթէ խորհուրդիս լսէր հիմա տեղ էինք հասած. չէ ես երիտասարդ եմ. նա փորձված, շրջահայեաց, Եկ ու մի տրաքվի. մի քանի մղոնի համար ամբողջ գիշեր պէտք է ծովի վրա մնանք. այն էլ այսպիսի մի մեծ գիշեր. եթէ ուրիշ աւելի մեծ փորձանք չը պատահի. ո՞վ գիտէ թէ հիմա ուր ենք գնում : Չեմ հասկանում թէ ընկերութիւնը այս քաւթառին ինչո՞ւ է պահում :

Նաւապետի օգնականը քրթմնջում էր, իր պետին դատափետում. իսկ մենք տանջվում էինք : Քնել անկարելի էր. վեր էինք բարձրանում իսաւրն էր ճնշում, ծովը ահազին բերան բացած մեզ կլանելու. սպասող հրէջ երեւում. վար էինք իջնում խեղդվում էինք նախասե-

նակների օդի ծանրութիւնից և սրտի տարօրինակ խռովութիւնից :

Կրկին տախտակամածի վրա էինք. և նաւի կողին յենված շարունակ իրար հարցնում էինք.

— Ի՞նչ է, փարոսը չերեւո՞ց.  
— Այս գիշեր Փօթի չե՞նք հասնելու :

Վերջապէս մեզնից մէկը այդ շատ անգամ կրկնված հարցերից ձանձրացած բացականչեց.

— Ի՞նչպէս երեւայ փարոսը. քանի որ մենք նոյն տեղում կանգնած ենք : Փարոսը ինքը մեզ չի մօտենայ, մենք պէտք է նրան մօտենայինք : Հիմա մշուշ էլ կայ. քողի նման ծածկել է մեր աչքերը : Մինչև այդ քողը չը վերնայ, մեր քաւթառ ինքնակամ շարունակ նոյն տեղում պէտք է օրօրվի : Մեզաւորը նաւապետն է, վախեցաւ. այդ մշուշը ճեղքել անցնելու. Ի՞նչ կարելի է անել. քանի որ առաջ չենք գնում դէպի փարոսը, պէտք է սպասենք, մինչև մշուշը ինքն փրան կորչի : Սպասողը դէպքի յաջողութեան վրա պէտք է յոյս դնի :

Այս խօսքերը լսուլեց յետոյ բոլորս էլ ընկզմիցէն մեր մտքերի մէջ. պէտք էր սպասել. բայց մին-

չև ե՞րբ : Տանջվում էր նա, ով սպասել չգիտէր : Ամէն մարդ իր մտքերով էր զբաղված, իր սկսեց քամի փչել. հետզհետէ զօրեղացաւ. հինցած նաւը սկսեց այս ու այն կողմ ընկնել, ճրճթալ. կարծես թէ ուղում էր խորտակվել և մի անգամից ազատել մեզ այդ անտանելի սպասողական դրութիւնից : Մեզ թւաց որ ծերացած, զտամած Բաբուշկայի վերջին վայրկեանները մօտեցել էին, և նա պատրաստվում մեզ էլ իր հետ տանի ծովային անդունդը...

Ծանր էր մեր հոգեկան վիճակը, խաւարը, մշուշը, փոթորիկը, և ծովը միացած՝ ուղում էին մեզ ոչընչացնել—մեր նպատակներով, իտէալներով և զգացումներով միասին, մի վայրկեանում թաղել ծովի մէջ. ջրային զգանքների բաժին դարձնել մեր միտն ու ուկորները : Անկարելի էր հաշտվել այդպիսի յիմար կերպով կիանքից բաժնվելու մտքի հետ :

Մինչ մեզնից ամէն մէկը այդ մտտութիւնների մէջն էր, յանկարծ նաւաստիներից մէկը գոչեց.

— Փարոսը, փարոսը... Փոթորիկը մեզ ազատեց. նայեցէք այն կողմը,

մշուշ չկայ, երկնքում աստղեր են երեւում, իսկ ցածր փարոսը :

Բոլորս էլ վազեցինք օգնականի մօտ. նա դիտակով նայում էր նաւաստու ցոյց տուած կողմը. վերջապէս դիտակը հեռացրեց աչքերից և գարձաւ մեզ.

— Նաւաստին ճիշդ է ասում, փարոսն է. էլ վախ չկայ : Հիմա, առանց մեր խոհեմ ծերութիւն հարցընելու, կարագացնեմ նաւի գնացքը, որչափ կարելի է : Հող չէ, եթէ մեռնենք, ոչնչանանք, գոնէ արագութեամբ, տարեքի հետ կուեւրվ կը մեռնենք : Երեւակայեցէք, որ այս փոթորիկը աւելի սաստկանայ, մեզ տանի բոլորովին հեռու կողմեր. գիտէ՞ք, զառամած Բաբուշկան չի կարող դիմանալ. իսկոյն կը փչրվի. մանաւանդ որ մենք ամուխի պաշար չունենք : Գնանք առաջ, թոչնէք դէպի փարոսը. մեր նպատակ նաւահանգիստը այն տեղ է...

ՎԱՐՈ

—(—)

րուն մէջ թշնամութիւն առաջ բերելու համար կրցածը ըրաւ և ընդհանուր թշնամին գոհեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պօլսական լրագիրներուն մէջ կը կարդանք:

Խառն ժողովը նիստ ըրաւ Յուլիս 21ին Ղալաթիոյ Խորհրդարանը:

Այս պաշտօնակազմը ինչ ըլլալը արդէն բացատրած էր մեր Պօլսոյ թղթակիցը իր վերջին նամակովը:

Վեհ. Կաթողիկոսը Գէորգեան ճեմարանի ուսուցիչներէն յանձնաժողով մը կազմել է, որ պիտի կազմակերպէ ձեմարանի 25 ամեայ յօրեւանի հանդէսը:

Նիւ-Եսրքի մէջ թատերական ներկայացումի մը արդիւնքը եղող 40 անգլ. ոսկի զրկուած է Պատրիարքարան ի նպաստ գաւառացի կարօտեալներուն:

«Սուրհանդակ»ի մէջ կը կարդանք:

Բագուէն մեզ կը գրեն թէ՛ երկրաշափ Պ. Լեւոն Ղուլեանց 11,000 ռուպլի (1,000 Օսմ. ոսկիէն աւելի գումար մը) զրկած է գաւառային կարօտեալներուն համար:

Մարաշի Խառն ժողովը խնդրեր է Պատրիարքարանէն որ 50 տուն խեղճերու բնակարաններ շինուելու համար նպաստ մը ըլլայ:

Կիլիկիոյ ընտրուած կաթողիկոս Տ. Գրիգորիոս եպս. Ալէքսանդրեան որ բաւական առեւտր

ի վեր շղային ցաւեր կը զգայ եղբր ոտքերուն և մարմնոյն վրայ. ամսէ մը ի վեր այդ ցաւերը հետզհետէ տարածուեր են մարմնոյն այլ և այլ կողմերը և գլուխը:

Տպուած ազգարարութեան համաձայն կիրակի հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Գ. Կատարինէ Պրայզըրի համար:

Թաթար-Բաղարճը գէն մեղ կը գրեն:

Ժողովուրդի միահամուռ պահանջումով Օրմանեանը չէ յիշուած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կրթական նախարարը կը յայտարարէ թէ կայսրը հրամայած է այս վերջին խոսովութիւններու պատճառաւ արձակուած ուսանողները, զալիք ուսումնական տարիին կրնան շարունակել իրենց ուսումը, բացի անոնցմէ որոնք բոլորովին համալսարանէն վճռոված են:

Ֆինլանտացիները մէնէրայ Պրօկօփէին միջոցաւ, երկրորդ աղբւսագիր մը տուած են Ձարին, յայտնելով որ Ձարի փետրուարի 15ին հրատարակած ուրախ լուրովին հակառակ է Ֆինլանտական սահմանադրութեան ոգւոյն:

«Նօվօյէ Վրէմիա» թերթը կը հաղորդէ որ Ձարը այդ աղբւսագրին վրայ գրած է. ես ու շագրութիւն չեմ գարձներ այս աղբւսագրին վրայ:

«Թայմզ»ի թղթակիցը կը հաղորդէ Գանտիայէն որ Կովկասաբնակ յոյները դիմած են Կրէտէի կուսակալութեան՝ գաղթել Կրէտէի մահմետականներու թուղած հոգերը մշակելու համար:

Ենթադրուած է իր խորհուրդին ուսումնասիրելու համար:

Խնդիրը սկզբունքով ընդունուած է: Եկողներուն թիւը 5000ի կը հասնի:

Պէլկրատի զինուորական գատարանը հազիւ մինչեւ օգոստոս եօթը վերջացնէ յանցաւորներու գործերը:

Պէլկրատի զինուորական աստեանը գատար վերջացուցեր է մեծ մասը սպասածէն աւելի խիստ են պատժուած:

Ֆրանսական թերթեր կը գրեն:

Պօլսոյ ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է, կը վախցուի թէ Երիտասարդ Թուրքերը և հայերը միասին պիտի գործեն:

Սուլթանի թիկնապահ զօրքէն չորս սպաներ ձերբակալուած են, որոնք իրեւ թէ զօրքը գրգռած են զինուած յարձակուելու Երւտըլին վրայ:

Չորս սպաները պիտի դատուին զինուորական դատարանի առջեւ:

Մահմետականները սկսած են Կրէտէ վերադառնալ, Ձմիւռնիայէն վերջին նաւով վերադարձեր են 150 հոգի:

Մէկ կողմէն ալ հայերը կսկսին Կրէտէ թափիլ. ամէն օր կուգան:

Նոր գաղթականութեան երրորդ տարրը պիտի կազմեն Կովկասէն գաղթող յոյները, որ Ռուս

սիայէն կը փախին իրենց ազգայնութիւնը փրկելու համար:

Ն Ա Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Փ

Տօքթ. Փափազեան, Ֆիլիպօպօլի: — Ձեր հերքումը միւս համարի մէջ կը տպագրուի:

Պուրկազ, Ո. — Ձերը նոյնպէս:

Ամերիկայ, Ութըր, Ս. Բ. — Տպագրուած թատերական գրուածքներ չունինք, ուստի չենք կրնար զրկել:

Ամերիկայ, Փրօփիտէնս, Կ. Ս. — Փոքր քանակութեամբ գիրք զրկելը շատ դժուար է. հաճեցէք գրել մեզ թէ շատ կրնայ տարածուիլ և ճամբու ծախքն ալ կը վճարեն զնոյնները:

Ա Ձ Գ

Փորագրութեան, լուսատպութեան և լուսավիճագրութեան ամէն ճիւղերուն մէջ ստացած հմտութեանը համար՝ Գերմանիոյ մէջ մետալ ընդունող հայ երիտասարդ մը կը փնտտէ դրամատէր ընկեր մը սոյն զեղարուեստներու վրայ գործ սկսելու համար:

2-3

ԵՓՐՈՍԻՆԷ ԹԱՐԱՔՅԵԱՆ

Կը դասախօսէ կանանց վերաբերեալ ամէն տեսակ զգեստ ձեւել ու կարել: Չափաւոր գին:

Փ. Պօլիս, հրապարակ Գրեհազ Պօրիս, թիւ 200: 2-4

Ա Ձ Գ

Հայերէն և ֆրանսերէն լեզուաց, ինչպէս նաեւ կրօնագիտութեան, պատմութեան, աշխարհագրութեան, թուարանութեան և բնական գիտութեանց հմուտ ուսուցիչ մը կը փափազի ազգային վարժարանաց միոյն մէջ պաշտօն ստանձնել, բանակցութեանց համար պէտք է գիմել խմբագրութեան:



Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ ԿՕՇԿԱԿԱՐ

Մուսալլա, րադնիֆ վոդոց, Հաճի Հասանի օրէրի սակ:

Ճաշակաւոր, տոկուն և ձեւաւոր կօշիկ շինել տալ ուզողը պէտք է գիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կեւլայ:

Գիները խիստ գիւրամատչելի: